

Հ.Լ. ՍԵՆԵՔԵՐԻՄՅԱՆ

ՍԵՆԵԳՐ՝ ՈՐՊԵՍ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՃԻ ՏԱՐԱՏԵՍԱԿ

Դիտարկվում է անգլերեն լեզվի խոսակցական ոճի տարատեսակներից մեկը՝ սլենգը: Ներկայացվում է սլենգի ծագումը, տարածումը և գրական լեզվում նրա հիմնավորվելը՝ որպես տվյալ լեզվի բառապաշարի բաղկացուցիչ մաս:

Առանցքային բառեր. գրական լեզու, սլենգ, ժարգոն, ծածկալեզու, խոսակցական ոճ, պաշտոնական ոճ, բառակազմություն, դարձվածք, բառիմաստ:

Դի մեկը՝ սլենգը: Ներկայացվում է սլենգի ծ

Դժվար է գտնել ավելի հարափոփոխ երևույթ լեզվի մեջ, քան սլենգն է:

Սլենգը (**Slang** տերմինի ծագումն անհայտ է) կամ, ըստ որոշ լեզվաբանների, դրա հոմանիշները համարվող ժարգոնը (**jargon, argot** – ժարգոն, արգո) և ծածկալեզուն (**cant** – ծածկալեզու, գաղտնալեզու) որքան էլ հասկացված լինեն, միևնույն է, դեռևս ուսումնասիրման կարիք ունեն:

Սլենգը խոսակցական լեզվի մի տեսակ է, որը գրական լեզվից շատ ավելի ցածր մակարդակի վրա է գտնվում: Այն հատուկ խոսելաձև է, մտքեր, իրավիճակներ և վերաբերմունք արտահայտելու յուրատեսակ ոճ: Սլենգի մասին Longman բառարանում տրվում է հետևյալ պարզաբանումը. «Լեզու է, որի բառերն ու արտահայտությունները ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքում ոչ միշտ են լուրջ ընդունվում, դրանք համարվում են ոչ պաշտոնական, ոչ քաղաքավարի և անգամ վուլգար: Սլենգը միտում ունի արագ դառնալ մոդայիկ և նույնքան արագ էլ դուրս գալ մոդայից» [1]:

Այսօր անգլերեն լեզվում հատկապես առանձնանում են սլենգի երկու տարբերակներ՝ անգլիական (կամ բրիտանական) և ամերիկյան:

Սլենգային բառերն ու արտահայտությունները, ճիշտ տեղում և հարմար պահին օգտագործելով, խոսքը կարելի է դարձնել ավելի դիպուկ ու պատկերավոր, զգացմունքային ու սրամիտ: Բերենք մի փոքր հատված նախ սլենգով, այնուհետև գրական անգլերենով:

He's the last shake of the bag, Humpty-Dumpty with a big man and wife in his pocket. Last summer he spent a moon in that jug. But he's out now and will return there on Saint Jeoffrey's Day.

He is the youngest of the family, a short and fat person, with a big knife in his pocket. Last summer he spent a month in that prison. He is not in prison now and he'll never return there.

Սլենգային բառերն ու արտահայտությունները ծագում են մարդկանց ինչ-որ մի խմբում, այնուհետև ժամանակի ընթացքում տարածվում են՝ ընդգրկելով բազ-

մաթիվ այլ խմբեր: Խոսքը ավելի արտահայտիչ դարձնելու նպատակով սլենգին են դիմում հասարակության գրեթե բոլոր շերտերին պատկանող մարդիկ:

Ինչու՞ է խոսքում առհասարակ սլենգ օգտագործվում: Սլենգին դիմելու պատճառներից թերևս ամենաակնհայտը մյուսներից տարբերվելու, առանձնանալու, «ճանձրալի» միօրինակությունից դուրս գալու ցանկությունն է: Օրինակ՝

mushroom – սունկ - sl. հովանոց,

artillery – հրետանի - sl. լոբի,

hard oil – պինդ յուղ - sl. կարագ,

cow juice – կովի հյութ - sl. կաթ,

noodle – լապշա - sl. գլուխ, ուղեղ:

Սլենգին դիմելու ոչ պակաս կարևոր պատճառներից է նաև դիմացինի թույլ կողմերը ծաղրելու, դրանք բացահայտելու և համընդհանուր ծիծաղ առաջացնելու փափագը: Երբեմն միմյանց ծաղրուծանակի և սուր քննադատության են ենթարկում ոչ թե անհատները, այլ խմբերը, գերդաստանները, գյուղերը, կուսակցությունները: Արդյունքում ստեղծվում են նոր և ինքնատիպ բառեր, արտահայտություններ, բառակապակցություններ և նույնիսկ ձայնարկություններ, որոնց մի մասը ժամանակի ընթացքում կորցնում է սլենգային բնույթը՝ մուտք գործելով գրական լեզու.

bet – գրագ, խաղագումար - sl. իհարկե, բա ոնց,

pinch – ճմկորոց, պսղունց - sl. գողություն, բանտարկում,

trap – ծուղակ, թակարդ - sl. ոստիկան,

hitch – հրել, ձգել - sl. ամուսնանալ,

trim – ռազդել, հարդարել - sl. փող կորզել, շորթել,

Holy cow! - sl. Անհավաքալի է: Այ քեզ բան:

Jeez! You won! - sl. Տեր Աստված. դու հաղթեցիր:

Wow! What a sugar! - sl. Օ՜, ի՞նչ անուշիկն է:

Yeah! We’ve done it! - sl. Այո, մենք դա արեցինք:

Such an ABC! - sl. Այնքան պարզ բան է:

Yea, bo! - sl. Իհարկե, անխոս:

Սլենգի ծագման ու տարածման պատճառ է նաև գաղտնի ու չհասկացված լինելու ցանկությունը: Որոշակի մի խմբում ի հայտ է գալիս մի տեսակ ծածկալեզու՝ տվյալ խմբի զբաղմունքին կամ գործունեությանը համապատասխանող բառապաշարով: Գոյություն ունեն սլենգի բազմաթիվ տեսակներ՝ կախված այն բանից, թե հատկապես որ ոլորտն են դրանք ներկայացնում՝ զինվորական, ոստիկանական, թատերական, գողական աշխարհի, քրեածին տարրերի, ուսանողական և այլն:

Անգլիացի լեզվաբան Էրիկ Փարթորիջը այն կարծիքն է արտահայտել, որ «Սլենգը հավանաբար այնքան հին է, որքան կապակցված խոսքն ընդհանրապես: Մարդկանց կյանքի ուրբանիզացման բնույթն ուսումնասիրելով՝ մենք կարող ենք

ենթադրել, որ սլենգը ծնվել է այն ժամանակ, երբ քաղաքներում սկսել է մեծանալ բնակչության թիվը» [2]:

Սլենգն ընդունված է անվանել ոչ բարեհունչ, ոչ կիրթ, հաճախ նաև՝ անհասկանալի և վուլգար ոճ: Կա նաև, այսպես կոչված, «ստանդարտ» սլենգ, մի լեզու, որը ընդունված և ընդհանուր է բոլոր այն մարդկանց համար, ովքեր, ճանաչելով հանդերձ գրական բանավոր ու գրավոր լեզուն, դեմ չեն նաև օգտագործել ոչ պաշտոնական, խոսակցական սլենգը:

Ինչպես բոլոր լեզուների, այնպես էլ անգլերեն խոսակցական բառապաշարում կան նաև բառեր, որոնք կոչվում են ժարգոնային: Ժարգոնի նպատակն է՝ գտնել ու դուրս բերել մի ժամանակ լեզվում գոյություն ունեցած հին, գործածությունից դուրս մնացած կամ «մեռած» բառերը և դրանց հաղորդելով միանգամայն նոր իմաստներ՝ դարձյալ կյանքի կոչել դրանք: Ժարգոնը ծագում է որևէ նեղ սոցիալական խմբում և մյուս խմբերի համար գրեթե հասկանալի չէ: Բրիտանիայում և Ամերիկայում համարյա բոլոր սոցիալական խմբերն ունեն իրենց ժարգոնը [3]:

Սլենգն, ի տարբերություն ժարգոնի, թարգմանության կարիք չի զգում, սա գաղտնի կոդավորված լեզու չէ, այն հեշտ է հասկացվում ոչ միայն լեզվի կրողների, այլ նաև անգլերեն իմացող ցանկացած օտարերկրացու կողմից:

Հարկ է նշել նաև, որ սլենգը տարբերվում է գրական լեզվից միմիայն բառապաշարով, իսկ նախադասության կառուցվածքը և ձևաբանությունը գործնականում մնում են անփոփոխ:

Արդ՝ բառակազմական ի՞նչ մեթոդներ են կիրառում սլենգ ստեղծողները:

1. Բազմավանկ բառերը կրճատվում են, առաջին վանկն արտահայտում է բառի իմաստը՝ երբեմն կրելով հնչյունափոխություն: Օրինակ՝

business – գործարք – sl. biz.,

microphone – խոսափող – sl. mike,

Japanese – ճապոնացի – sl. Jap.,

doctor – բժիշկ – sl. doc.,

captain – նավապետ – sl. cap.,

second – վայրկյան – sl. sec.,

cigarette – ծխախոտ – sl. cig.,

laboratory – լաբորատորիա – sl. lab.,

sister – քույր – sl. sis.,

Los-Angeles – Լոս-Անջելես sl.Los.:

Կրճատվում է անգամ Շեքսպիրի անունը, դառնալով՝ **Old Shake.**

2. Կիրառվում է ածանցումը՝ բառին հաղորդելով նոր իմաստ: Օրինակ՝ *lose – կորցնել, loser (sl.) – տանուլ տվող, ծախորդ, fresh – թաքմ, fresher (sl.) – համալսարանի I կուրսեցի, bark – հաչել, barker (sl.) – ափրճանակ, kiss – համբուրել*

kisser (sl.) - քերան , tooth - ատամ , toother (sl.) - հարված ատամներին , nose - քիթ , noser (sl.) - հարված քիթ , smell - հոտոտել , հոտ քաշել , sneeze – փռչտալ , smeller, sneezer (sl.) – քիթ , tick - տկտկալ , ticker (sl.) – սիրտ:

3. Գրական լեզվում օգտագործվող բառերն առանձնացվում են՝ դրանց տալով միանգամայն այլ իմաստներ: Օրինակ՝

*governor - կառավարիչ - (sl.) հայր, տեր,
shark - շնածուկ - (sl.) գրպանահատ,
bird - թռչուն - (sl.) աղջիկ, ինքնաթիռ,
buck - արու - (sl.) դուլար,
peach - դեղձ - (sl.) գեղեցկուհի,
egg - ձու - (sl.) ռումբ,
bread - հաց - (sl.) փող,
snow - ձյուն - (sl.) հերոին,
juice - հյութ - (sl.) բենզին,
red - կարմիր - (sl.) ոսկի:*

4. Երկու բառերի համադրությամբ առաջանում է նոր բառիմաստ: Օրինակ՝

*bald head – քաչալ գլուխ - sl. ծերունի,
smoke eater – ծուխ ուտող sl. հրշեջ,
hen party – հավերի խնջույք sl. կանանց հավաք,
soul case – հոգու ճամպրուկ sl. մարմին,
pudding house – պուդինգի տուն - sl. սրամոքս,
head guard – գլխի պահակ sl. գլխարկ,
idea pot- մտքերի աման sl. գլուխ,
heaven reacher – երկինք հասնող sl. հոգևորական,
rabbit food – ճագարի կեր sl. աղցան ,
eye opener – աչք բացող sl. 1 բաժակ օղի ,
dead soldier – մեռած զինվոր sl. դատարկ շիշ,
ten bones – 10 ոսկոր sl. 2 ձեռք,
black bottle – սև շիշ sl. թույն,
marriage music – ամուսնական երաժշտություն sl. երեխաների լացուկոճ,
land owner – հողատեր sl. թաղված մարդ,
iron house երկաթե տուն – sl. բանտ:*

Յուրաքանչյուր բառ, բառակապակցություն, արտահայտություն, որը ծագում և օգտագործվում է սլենգում, ունի իր ուրույն պատմությունը, ակունքներն ու «ծննդավայրը», ի հայտ գալու պատճառը:

Սլենգում իրենց անվանումներն ունեն անգամ ազգերը: Օրինակ՝

blue noses - կապույտ քթեր – կանադացի,

macaroni - մակարոն – իտալացի,
Abdul - Աբդուլ – թուրք,
nips - կծու խոսք, խայթոց – ճապոնացի,
harps - տավիղ – իռլանդացի,
Yankees - կորուկ ձգում, պոկում – ամերիկացի,
greasers - հնոցապան – մեքսիկացի,
Jerry - խախուս – գերմանացի,
snow-ball - ձնագնդիկ – նեգր(եր):

Սլենգը մի տեսակ փորձադաշտ է, որտեղ որոշվում է այս կամ այն բառի հետագա գործածության պիտանիությունը: Ժամանակի քննությանը ենթարկված և լեզվի կրողների կողմից ընդունված բառերը մուտք են գործում գրական լեզու՝ դառնալով նրա անքակտելի մասը: Եվ հակառակը՝ «չսիրված» ու չընդունված բառը դուրս է մղվում ու մահանում [4]:

Սլենգը պահանջում է անդադար փոփոխություն ու թարմացում: Ամեն մի նոր սերունդ ստեղծում է իր սլենգը՝ կապված մարդկանց կենսամակարդակի ու լեզվամտածողության փոփոխության, կյանքի ընդհանուր զարգացման և ժամանակի նոր պահանջների հետ: Ամերիկյան սլենգում լայնորեն կիրառվում են հետևյալ արտահայտությունները՝

Big Apple - մեծ խնձոր – (sl.) Նյու Յորք,
Big Drink - մեծ խմիչք – (sl.) օվկիանոս,
Old Harry - ծերուկ Հարի – (sl.) սափանա,
Big Guy - մեծ տղա – (sl.) աստված:

Հարյուրավոր բառեր կան ժամանակակից անգլերեն լեզվում, որոնք ժամանակին գործածվել են սլենգում կամ ժարգոնում, իսկ այսօր դրանք լեզվում «մշտական գրանցում» ունեն: Օրինակ՝ *job* - աշխատանք, *qործ*, *hooligan* - խուլիգան, *կարգազանց*, *kid* - երեխա, *ուլիկ*, *gadget* - սարք, *միջոց*, *ռոբոտ*, *gas* - գազ, *փուչ բան*, *բենզին*, *guy* - տղա, *մարդ*, *gangster* - գանգստեր, *բանդիտ*, *jazz* - ջազ, *վոլգար*, *գոեհիկ*, *blues* - բլյուզ, *մելամաղձություն*, *jeep* - ջիպ, *գյուղական փոխադրամիջոց*, *cowboy* - կովբոյ, *ծիավոր հովիվ*:

Սլենգը կոփվում է գորանոցներում, ուստիկանական բաժանմունքներում, բիլիարդանոցներում, գինետներում, սալոններում: Այն ուղղակի անփոխարինելի է երգիծաբանների, լրագրողների, քաղաքական կամ սպորտային մեկնաբանների համար:

Սլենգը չի շրջանցել նաև հատուկ անունները՝ դրանցում երբեմն տեսնելով խոր իմաստ: Օրինակ՝ *Bertha* - Բերտա – գեր ծանրամարմին կին, *Judas* - Հուդա – դավաճան, *Scrooge* - Սքրուջ – ժլատ, *գծուծ*, *Ralph* - Ռալֆ – փսխում, *ժայթքում*, *John* Ջոն – լոգարան, *London* - Լոնդոն – թանձր մառախուղ, *from Adam* - Ադամից – անհիշելի ժամանակներից, *Adam and Eve's tags* – Ադամի և Եվայի հագուստ – մերկ, *Uncle Sam* - քեռի Սեմ – ԱՄՆ կառավարություն:

Կարելի է, որոշ վերապահումով, համաձայնել այն լեզվաբանների հետ, ովքեր սլենգը համարում են գրական լեզուն թարմացնելու անսպառ պաշար:

Ժամանակին, երբ ծաղկում ապրեցին ջազը և ժամանակակից երաժշտության մյուս ոճերը, սլենգը հարստացնողները դարձան երաժիշտները և նրանց երկրպագուները, ինչպես և ուսանողները, գնչուները: Լայն տարածում գտած սիր-ված երգերը լիքն էին սլենգային բառերով, և թերևս դա էր հիմնական պատճառը, որ այդ երգերը արագ տարածվեցին՝ արժանանալով ժողովրդական լայն զանգվածների համակրանքին: Մեր օրերում մասսայականություն է վայելում ռեփ երաժշտությունը, որը սլենգի ու ժարգոնի խառնուրդ է, շատ հաճախ՝ քաղաքական կամ սոցիալական ենթատեքստով:

Այսօր սլենգային բառերն ու արտահայտությունները ներխուժել են ամերիկյան ու բրիտանական ֆիլմեր, ռադիո և հեռուստահաղորդումներ, թերթեր ու ամսագրեր, գեղարվեստական գրականություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման սրընթաց հոսանքը իր հետ բերել է նաև սլենգի հարուստ պաշար: Կյանքի հետագա ընթացքը ցույց կտա, թե որքան և որ բառերը կմտնեն գրական լեզու:

Եվ, այնուամենայնիվ, մեր կյանքում կան բնագավառներ, որտեղ սլենգը և ժարգոնը տեղ չունեն: Սլենգային բառերն ու արտահայտությունները չեն կարող թափանցել դպրոցական կամ ուսանողական դասագրքեր, գիտության որևէ ճյուղ ներկայացնող գրականություն:

Սլենգը չի համապատասխանում պաշտոնական ոճի պահանջներին: Ուստի բարձրաստիճան հանդիպումների ու զրույցների, պետական ու կառավարական բարձր մակարդակով բանակցությունների կամ հարցազրույցների ժամանակ հարկավոր է զերծ մնալ սլենգային բառեր ու արտահայտություններ թույլ տալուց: Սլենգը անընդունելի ու տգեղ է ցանկացած երկրի պառլամենտում, օրենսդիր կամ գործադիր մարմինների ժողովներում:

Եզրակացություն: Լեզուն մեր կյանքից, կենցաղից ու գործունեությունից անկախ չի զարգանում: Յուրաքանչյուր լեզվի բառապաշարում ասես արտացոլված են այդ լեզվով խոսող ժողովրդի ողջ պատմությունը և անցած ուղին:

Ամեն մի անցնող օր մի բառ, մի արտահայտություն, մի միտք, մի հասկացություն է ավելացնում այն հսկայական բառամթերքին, որն ընդունված է անվանել լեզվի բառապաշար: Պետք է փորձենք հնարավորինս մաքուր և անաղարտ պահել լեզուն՝ հատուկ և առանձնակի սիրով ու զգուշությամբ արտաբերելով յուրաքանչյուր բառը: Պետք է հիշենք, որ բառերն ապրում են ամենևին էլ ոչ բառարաններում կամ գրքերում: Բառերի կյանքը լեզվի մեջ է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Longman Dictionary of Contemporary English. - Great Britain, 1978.
2. **Eric Partridge.** Slang Today and Yesterday (fourth edition). - Great Britain, London, 1972. - 476 p.
3. **Eric Partridge.** The World of Words (third edition). - USA, New York, 1970. - 201 p.
4. **Eric Partridge.** A dictionary of Historical Slang (Penguin reference books). - Great Britain, London, 1972. - 1065 p.

Ա.Լ. СЕНЕКЕРИМЯН

СЛЕНГ КАК РАЗНОВИДНОСТЬ РАЗГОВОРНОГО СТИЛЯ

Рассматривается одна из разновидностей английского разговорного стиля – сленг. Представляется происхождение сленга, распространение и его обоснование в стандартном языке как составная часть лексики данного языка.

Ключевые слова: литературный язык, сленг, жаргон, тайный язык, разговорный стиль, официальный стиль, словообразование, фразеологизм, значение слова.

H.L. SENEKERIMYAN

SLANG AS A PECULIAR TYPE OF COLLOQUIAL STYLE

One of the peculiar types of colloquial style of the English language is slang. The origin and spread of slang and its basing in standard language as a constituent part of the vocabulary of that language are introduced.

Keywords: standard language, slang, jargon, cant, colloquial style, official style, word-building, phraseological unit, meaning of words.